Ամուսնութեան պրոբլեմը բուրժուական հասարակութեան  
մեջ, կանանց հարցը և այդ հարցի մեկնարանութիւնը, վորպես  
անհատի ազատագրում («Նորա»): Ժառանգականութեան տեսու-  
թիւնը («Ուրվականներ»): Սիմվոլիկական տարրերի ուժեղա-  
ցումը նրա վերջին դրամաներում («Կառուցող Սոլնես», «Հեղա  
Գաբլեր»): Դիալոգի տեխնիկայի վերլուծութիւնը:

Իբսենի սոցիալական նշանակութիւնը: Ենգելսը Իբսենի  
մասին: «Յիվ ինչ թերութիւններ ել վոր ունենան Իբսենի դրա-  
մաները, նրանց մեջ այնուամենայնիւ արտացոլված ե—թեկուզ  
և մանր, միջին-բուրժուական,—սակայն գերմանականից անհամե-  
մատ ավելի բարձր կանգնած մի աշխարհ, վորի մեջ մարդիկ  
գեռեա ունեն խարակտեր, ընդունակ են ձեռնբեցութեան և  
գործում են ինքնուրույն կերպով, թեկուզ և հաճախ արտաոոց  
ոտաբերկրացի դիտողի տեսակեաից» (Ենգելսի նամակը Պաուլ  
Երնստին, 5 հուլիսի 1890 թ.):

Բյորնստերնե Բյորնսոն, Բյորնսոնի ստեղծագործական ու-  
ղին ազգային-առմանտիկական շարժումից զեպի սեպիստական  
քննադատական յերկերը:

Տասնիններորդ դարավերջի Շվեդական գրականութիւնը  
Սարինգբերգը նատուրալիստական արժատական ուղղութեան  
պարագլուխ: Հասարակարգի և բուրժուական ընտանիքի

քննադատութիւնը («Կապույտ սկնյակը»): Իրամայի զեպեր-  
մինիստական տեսութիւնը Սարինգբերգի վոտ՝ վողբերգական  
հանցանքի բացակայութիւնը («Որիորդ Յուլիան»):

Սարինգբերգի անցումը զեպի միատիցիզմը և սիմվոլիզմը  
(«Իրամակոսի ուղին»):

Սեւմա Լագերլեֆ, նրա նեոտոմանտիզմը («Փեստա Բերլինգ»):  
Սկանդինավյան նատուրալիզմի ներածումը իմպրեսիոնիզմի:  
Իմպրեսիոնիզմի սուբյեկտիվիզմը, թուացիկ տպավորութիւնների  
զծադրելը, վոչ սյուժետային լինելը:

Կնուտ Համսուն—նորվեգիական խոշոր գրող, իմպրեսիոնիս-  
տական լիբրիկական արձակի վարպետ: Մանր բուրժուազիայի  
զարգացման յուրահատուկ բնույթը նորվեգիայում և Համսունի  
ստեղծագործութեան սոցիալական արժանները: Մանր բուրժու-  
ազիայի պատկերը Համսունի վաղ շրջանի ստեղծագործութեան  
մեջ: Հենարան շունեցող յերազող-ինտելիգենտի պատկերը:  
Ռեակցիոն ինդիվիդուալիզմը և հոգեբանական սուբ վերլուծու-  
թիւնը («Սով», «Միտերիաներ»): Փախուստ զեպի բնութիւն և  
բնութեան հակադրումը քաղաքին, վորպես ներգաշնակ սկզբունքը  
սուոդչացնող հանգամանք («Պան»): Նահապետական գյուղացի-  
ութեան ավելի ուժեղ իգեալականացումը («Յերկրի հյուսիսը»):  
Կյանքի սեակցիոն ըմբռնումը, վորպես կենսաբանական հովի-  
տանական շրջանառութիւն և Համսունի վերջին սեակցիոն յե-  
լույթները:

Գ) Գերմանական հասուրալիզմը

Չուրայի և Իբսենի աղղեցութիւնը գերմանական նատու-  
րալիստների վրա: Գերմանական «հեթոտողական նատուրալիստ-  
ների» գեղարվեստի տեսութիւնը: Իարձ զեպի բնութիւնը  
Կապը բնագիտութեան, Հեկկելի մատերիալիզմի հետ: Մտեցումը  
բանվորական շարժման հետ: Սոցիալական թեմատիկան:

Արնո Հոլցը և Իոհանես Շլաֆը— գերմանական նատու-  
րալիզմի տեսաբաններ («Հայր Համլետը»):

Գերհարտ Հաուպտմանը և գերմանական նատուրալիստական  
դրաման: Ժառանգութեան և միջավայրի պրոբլեմը: «Արեւածաղից

տուաջ): «Ջուրիակները» — Հաուպտմանի ամենաարժատական յերկը «Ջուրիակները» սոցիալական նշանակութիւնը: Անհատի և կոլեկտիվի նկարագրութեան պրորիւմը դրամայում: Նատուրալիստական դրամայի ստատիկ բնույթը: Վոդերբզականի ըմբռնումը: Լեզվի պրորիւմը: Բնական լինելու ձգտումը, պրովինցիալիզմ, լարբառ:

Հաուպտմանի ճանապարհը նատուրալիզմից դեպի սիմվոլիզմ, դեպի «հակցիա» («Ջրասուղ զանգը»): Հաուպտմանի արվեստի անկումը: Հաուպտմանի շովինիստական դիրքը Համաշխարհային պատերազմում: Հաուպտմանը և Ֆաշիզմը:

## 2. ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԻ ԱՆԿՈՒՄԸ (ՍԻՄՎՈԼԻԶՄ, ԴԵԿԱԴԱՆՍ)

Բուրժուական գլխակցութեան ձգնաժամը կապիտալիզմի վերջին ետապի անցման պայմաններում: Ռեալիզմից դեպի սիմվոլիզմը և դեկադանսը: Սիմվոլիզմը, դեկադանսը — անակցիա գեղարվեստական ստեղծագործութեան սոցիալական բնույթի դեմ: Ռեալիստական տրագիկոմիաների ժխտումը: Նոր արվեստի կաստայականութիւնը, արիստոկրատիզմը: Սիմվոլիզմի փիլիսոփայական հիմքը՝ իրրացիոնալիզմը, ինտուիտիվիզմ (Բյորրզսոն): Ձևի հզկվածութիւնը:

### Ա) Շեանսիական սիմվոլիզմը յեվ դեկադանսը

Բողոքի ազդեցութիւնը ֆրանսիական սիմվոլիստների դպրոցի վրա:

Սանֆան Մալարմեն — ֆրանսիական սիմվոլիզմի տեսաբան: Մալարմենի պոեզիայի նրբացված եսթետիզմը և անկուսակալութիւնը: Այդ պոեզիայի ինքնամիտքութիւնը: Պատկերի փոխարինումը սիմվոլով, վորն ակնարկում է իդեայի ժախն, բայց վոչ ամբողջովին յերևան հանում այն: Մալարմենի ծածկազրված բանաստեղծութիւնը: Պոեզիայի ըմբռնումը, վորպես գաղափարի, հնչյունի և պլաստիկ պատկերի համադրութիւնը:

Պոլ Վեռլեն: Վեռլենի սիմվոլիզմի տարբերութիւնը Մալարմենի սիմվոլիզմից, հոգեկան գերլարումը և տառապանքների մոտիվները Վեռլենի մոտ:

Արթուր Ռեմբո: Նրա պոեզիայի յերկվութիւնը: Նրա յեր-

դերի քաղաքական սրութիւնը: Համակրանքը Փարիզի Կոմունայի նկատմամբ, պարողիա եսթետացնող պոեզիայի նկատմամբ: Պատկերների և ձևի նրբութեան զուգակցումը Ռեմբոյի պոեզիայում ցինիկ և անճոռնի համեմատութիւնների ու տեսաբանների հետ: Ռեմբոյի նովատորութիւնը և նրա տեղը ֆրանսիական սիմվոլիզմի գարգացման մեջ: Ռեմբոյի պոեզիայի դեկադեանտութիւնը: Ֆրանսիական սիմվոլիստների ազդեցութիւնը ռուսական սիմվոլիստների վրա:

### Բ) Սիմվոլիզմը յեվ բելգիական 19-րդ դարավերջի գրականութիւնը

Մորիս Մետերլինկը՝ սիմվոլիզական լիրիկական դրամայի ստեղծող: Գործողութեան բացակայութիւնը «տրամադրութիւնների դրամայում»: Պրոսոնաժների իմաստերիալականացումը — վոչ թե հերոս այլ սովերներ: Միատիկական ինտուիտիվիզմը և «լուսթեան» տեսութիւնը («Մոնարխների գանձը»):

Մետերլինկը — հուստես, մանվան և ճակատագրի, անավոր սպասման, կործանման նախազգացման բանաստեղծ («Անճոռնը», «Տննատախիլի մահը», «Կուլյերը»): Մետերլինկի փորձերն ստեղծել «լավատեսական» դրամա, յերջանկութեան վորոնումը մարդու ներսում, քչով բավականանալու մեջ («Կապույտ թռչուն»): Մետերլինկի հետադիմական հայացքները:

Եմիլ Վերհարն: Նրա ստեղծագործական ուղին — «Ճրամանդցիներ» պառնասայան յերգերից, սիմվոլիզմի միջոցով դեպի վերջին տարիների քաղաքական և փիլիսոփայական պոեզիան: Սիմվոլիզմի տարբերը: Պատկերների ընդհանրացումը: Վերհարնի մոտիվութիւնը բանվորական շարժման ընդդէմը: Վերհարնի բարեբար ազդեցութիւնը հեղինակի ստեղծագործութեան վրա: Աշխատանքի, բանվորական տրիբունի և այլ պատկերներ («Կարբիս», «Տրիբուն», «Ապստամբութիւնը», «Արշալույսներ»): Կապիտալիստական քաղաքի («Մովանրեջ քաղաքները») և կապիտալիզմի ճնշման տակ մեռնող գյուղի («Պատրանքային գյուղերը») պատկերը: Վերհարնի հումանիզմը:

Վերհարնի բանաստեղծական վարպետութիւնը: Վոտանավորի պլաստիկութիւնը, մոնումենտալ և քանդակազրոյշմային բնույթը: Նրա ազդեցութիւնը համաշխարհային պոեզիայի վրա:

Գ) Անգլիական դեկադանսը յեվ եսթեիզմը

Ասկար Ուալդը Գեդարվեստի «գերիշխումը» կյանքի վրա: Եսթեիզմի անբարոյութունը («Իորիան Գրեյի նկարը»): Վոճի պարադոքսութունը, արհեստականութունը: Անոգտակար գեղեցկության պաշտամունքը: Գերոնիզմը: Պարադիստական գեղեցկիզմի դատապարտվածությունը զգացումը: Առարկայի գերիշխումը մարդու վրա: Անհատականության լիարժեք զարգացման վորոնումները և «սոցիալիզմի» յուրանադրուկ ըմբռնումը («Մարգու հոգին սոցիալիզմի ժամանակ»): Հատուցման և քրիստոնեյության թեմաները, հեթանոսության պաշտամունքի փոխարեն ներհանգյան բանաբառը, «Ին պրոֆունդիս» հեթախթե (երբ):

Դ) Գերմանական սիմվոլիզմը յեվ եսթեիզմը

Փրանսիական սիմվոլիզմի ազդեցությունը գերմանական անկումային զրահանությունը վրա:

Ստեֆան Իեորգ, նրա եսթեիզմը և միստիկան: Նրա պոեզիայի նրբությունը և միստիկականությունը:

Իստանություն և նացիոնալիզմի պաշտամունքը: Արիստոկրատիզմ: Իեորգը և գերմանական ֆաշիզմը:

Գուգո ֆոն Հոֆմանստայ: Մահվան և դատապարտվածության մոտիվները նրա զրամաներում («Ապուշը և մահը»): Քայքայման ուժանտիկան և սիմվոլիզմ:

Բայեր Մարիա Բիլկի: Թոշնումի, թախծություն, իրիկնային լուսության բանաստեղծ: Նրա բանաստեղծության յերաժըշտականությունը: Բիլկին փորպես գերմանական լիրիկայի նովատոր: Նրա յերգերի նրբագլած ձևը:

3. 20-ԲԴ ԴԱՐԱՍԿԱԶՐԻ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԶԱՏԱԳՈՎՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգայնական տենդենցների աճումը և ազգա-գաղութային ժանրերի «ծաղկումը»: Պատերազմի և կապիտալիստական հափըշտակության փառաբանումը: 20-րդ դարասկզբի բուրժուական զրահանություն խիստ հակադեմոկրատական բնույթը: Բուրժուական արվեստի այլասերումը: Իմպերիալիզմի զրահանություն գեղագեներացիան բնույթը:

Ա) Իմպերիալիստական ռեակցիան գերմանական գրականության մեջ

Փրիպրիս Նիցշեն - իմպերիալիզմի փիլիսոփա: Բուրժուական փշրված քաղաքակրթության քննադատությունը և Նիցշեյի ռեակցիոն հակադեմոկրատիզմը: Ստրուկենրի բարոյականությունը և տերերի բարոյականությունը:

«Գերմարզու» գաղափարը («Այսպես խոսեց Զարադուստրան»): Նիցշեյի «պայքարը» դեկադանսի դեմ և նրա գեդարվեստի փիլիսոփայության անկումականությունը: Նիցշեյի եսթեիզմի արիստոկրատիզմը: Նիցշեյի սանդազորությունից սիմվոլիկան: Նիցշեականության խոր հետադիմությունը, ազդեցիվությունը և հակահումանիզմը: Նիցշեն - ֆաշիստական իդեոլոգիայի նախորդ:

Բ) Իմպերիալիստական ռեակցիան Ֆրանսիական գրականության մեջ

Դրեյֆուսի գործը և ռեակցիոն ուժերի համախմբումը: Բարրեսը և ազգայնական զրահանությունը: Նրա «ազգայնական ենթադիալի» արիլոգիան:

«Աքսիոն ֆրանսեզը» և Շարլ Մորասը: Պոլ Ադանի ռազմական-պատմական փպերը: Փրանսիական գաղութային վեպը: Գաղութային հափշտակումների բանաստեղծացումը և ռոմանտիկանացումը Պիեր Լոտի սանդազորություններում: Գաղութային Արևելքը Կլոդ Ֆարբերի նկարագրության մեջ՝ ֆրանսիական գաղութացնողների (կոլոնիզատոր) բարքերի նկարագրությունը («Քաղաքակրթվածները»):

Գ) Գաղութային ժանրը անգլիական գրականության մեջ

Ռեդյարդ Կիպլինգը - բրիտանական իմպերիալիզմի հեղինակ: Անգլիայի «աստվածային ընտրյալության» ավետարանական պատկերները: Սպիտակամորթ մարդու «բեռնվածություն» գաղափարը: Կիպլինգի գաղութային ժանրի տառնահանադակությունները (գաղութային առոյցայի նկարագրությունը ի տար-

քերթութիւնն ուսմանտիկական տրադիցիոն եկզոտիկայի): Բրիտանական դադութացման առորյա հերոսները և դանդաղաշարժ, դարերով անփոփոխ Հնդկաստանի պատկերը («Կիմ»): Կիպլինգի բուլլադները և յերգերը:

Պատմվածքներ և հեքիաթներ կենդանիների մասին, նրանց գեղարվեստական նշանակութունը («Ձոնգլիների գիրքը», «Հեքիաթներ»):

Կիպլինգի վոճը և նրա յերգերի ու բալլադների յուրահատուկ վարպետութունը (առորյայի լիրիկան, խոսակցական լեզուն):

### Գ) Ֆուտուրիզմը իսպախական գրականութեան մեջ

Իտալական իմպրիալիստական ագրեսիայի խիստ ակտիվացումը: Դ. Անունցիոն և ազգայնականութեան գրականութունը: Եսթետիզմից և երոտիկայից («Հաճույք» և այլն) դեպի բուսագրավոդ-հերոսների, ծովերը և ողբ նվաճողների գովերգումը («Գուցե այո, գուցե զոչ», «Միրուց ավելի հոյո» և այլն):

Ֆուտուրիզմ: Ֆուտուրիստների պայքարը «ակադեմիաների և թանգարանների» Իտալիայի դեմ, հանուն իմպրիալիստական Իտալիայի, եկսպանիայի, պատերազմի, գաղութային համալուծման: Տեխնիկայի ֆեաիշիզմը: Բուսութեան և պատերազմի պաշտամունքը:

Ֆուտուրիզմի պոետիկան և Մարինետտին («Մանիֆեստներ») Մարզու պատկերի վոյնչացումը գեղարվեստի մեջ: Մեքենայի պաշտամունքը, դինամիկան, լիզվի քայքայումը, հեռագրական վոճ: Ֆեաիշիզմի գուգակցումը միստիկայի և ինտիվիտուիզմի հետ:

Ֆուտուրիզմը—բուրժուական գեղարվեստի դեգրադացիայի ցայտուն արտահայտութուն: Իտալական ֆուտուրիստների և ազգայնական հեղինակների ուղին դեպի ֆաշիզմը:

### 4. 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՌԵՍԼԻԶՄԸ ՅԵՎ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

«Բուրժուական գեմոկրատիայի մոնիկանները» (Լենին) և իմպրիալիզմի քննադատութունը: Դեմոկրատական ինտելիգենցիան և նրա սպորտիցիոն իմպրիալիզմի դեմ: 20-րդ դարասկզբի

Լավադույն սեպուրիստների (Ֆրանս, Ռուս, Հ. Ման և այլն) ստեղծագործութեան խոր պրոբլեմատիկ բնույթը, քննադատական սեպուրիզմի տարրերի գուգակցումը ուսմանտիկական «պարստամբութեան» հետ (Ռուս, Ջեկ Լոնդոն): Միաժամանակ այդ հեղինակների անկարողութունը վերարտադրելու դարաշրջանի հիմնական հակասութունները և դարաշրջանի շարժիչ ուժերը:

Դեմոկրատական ինտելիգենցիան և պայքար հուսմանիզմի ու կուլտուրական արժեքների համար: Բողոք ընդդեմ անհատի խորտակման: Հումանիստական և ինդիվիդուալիստական պարանքները: «Վոգու անկախութեան» գաղափարները, ապաքաղաքականութունը, «խաղաղ սոցիալիզմը», կնալված «կապիտալիզմի համեմատաբար խաղաղ դարգացման» հետ նախապատերազմյան շրջանում (Մտալին):

Յեվրոպայի պրոլետարական շարժման ու աշխատավորական լայն մասսաների անբավականութեան արտացոլումը Ռուսների և ուրիշների քննադատական սեպուրիզմի մեջ:

### Ա) Քննադատական սեպուրիզմը Երանսիական գրականութեան մեջ

Անտուլ Ֆրանս: Ֆրանսի ստեղծագործութեան բարդութունը: Եսթետ, եպիկուրյան և սկեպտիկ Ֆրանսը և սեպուրիստ Յերրորդ հանրապետութեան սատիրիկ Ֆրանսը: Փախուստ բուրժուական իրականութունից դեպի անցյալի կուլտուրական արժեքները: Ֆրանսի հումանիզմը: Յերկու աշխարհայացքների ընդհարումը Ֆրանսի ստեղծագործութեան մեջ—հեթանոսական և քրիստոնեական («Թախ», նովելներ): Ֆրանսի հակակղերականութունը: Փիլիսոփայական վեպի ժանրը: Փիլիսոփայական դիալոգի դերը: Աբբա Կուանյարի պատկերը: Ֆրանսի ստեղծագործութեան առաջին շրջանի հայեցողական բնույթը:

Ֆրանսի քաղաքական ակտիվութունը Դրոյֆուսի գործի տարիներին: Ֆրանսի շրջադարձը, եսթետիկական պրոբլեմներից դեպի սոցիալական պրոբլեմները («Ժամանակակից պատմութուն») Ֆրանսը բուրժուական որինականութեան քննադատ («Կրեկեբերի», «Անկաշառ դատավորները»): Հումանիստ Բերժերեյի պատկերը: Իրոնիկական ինքնաքննադատութեան գծերն այդ

պատկերում: Տրանսի մոտեցումը ժողովի և դարասկզբի սոցիալիստական շարժման հետ: Տրանսը և ժողովուրդը: «Սպիտակ քարի վրա» գործի սոցիալական ուսուցիչան: Բուրժուական քաղաքակրթության սատիրան և մերկացումը: «Պատմության շրջապտույտ» հոստեսական դադարաբլուրը («Պինգվինների կըղղին»), «Աստվածները ծարավի յեն», «Հրեշտակների խոսվածք»):

Տրանսը և կոմունիզմը: Տրանսը դեպի սոցիալիստական հեղափոխությունը յեկող կուլտուրայի վարպետների նախակարգում:

Ռոմեն Ռոլան. Նրա հումանիզմի ակունքները: Ռոլանի հումանիզմի ժառանգությունն անցյալի խոշոր հումանիստական գաղափարներից: Հերոսական խարակտերների ստեղծելու փորձերը («Հավատի վողբերությունը», «Հեղափոխության դրամաները»): Ռոլանի հերոսական ուսմանտիղմն ու ունալիզմը: Ապստամբություն կապիտալիզմի դեմ և այդ խոսվածքային վողբերական սահմանափակությունը («Ժան Բրիստոֆ»): Ստեղծագործական վոզու, մենակ մարտիկի հակադրումը բուրժուական հասարակությունը: Բուրժուական կուլտուրայի այլասերման մերկացումը: Ռոլանի պացիֆիզմը, ամեն մի պայքարի ժխտումը ըացի վոզու պայքարից: Նրա վերաբերմունքը դեպի բանվորական շարժումը: Ռոլանի լավատեսությունը («Կոլա Բրունյոն») և ժողովրդայնության պրոբլեմը Ռոլանը և Տորատոյը:

Ռոլանը և Գորկին: Պայքար ընդդեմ պատերազմի («Կլեբրամբո», «Վեճ ու կուլի վրա»): Ռոլանը՝ «Ցեվրոպայի խիղճ»: Ռոլանի ուղին բուրժուական հումանիզմից դեպի սոցիալիստական հումանիզմը («Կախարդված հողի»): Ռոլանի հասարակական գործունեությունը վերջին տարիներում: Ռոլանի վոճի առանձնահատկությունները: Հոգեբանական «պեյզաժը» և ուսմանտիկական պոֆուսը:

### Բ) Քննադատական ունալիզմն անգլիական գրականության մեջ

Հոլուուորսի և քննադատական ունալիզմի ճակատագիրը նրա ստեղծագործության մեջ: Վիկտորական բարոյականության և կենցաղի վերադնահատությունը: Հոլուուորսի և Վիկտորականության ճգնաժամն Անգլիայում («Մազա Ֆորսայանների մա-

սին»): Հոլուուորսի սոցիալական քննադատական վարպետությունը, վորը յերևան և հանում բուրժուական հոգեբանություն և յուրթյունը:

Հոլուուորսի ունալիզմի և սեփալիտությունից դեմ նրա «պատմաբան» պատկերների սահմանափակությունը: Սեփալիտատիրոջ պատկերը (Սոմո), վորն ստանում է լիբիկական մեկնաբանություն: «Կարապի յերգը» վեպը և Ֆորսայանների կենսական լիարժեքության հաստատումը: Հոլուուորսի հետմահվան տրիտգիան («Աղջիկ ընկերը», «Մաղիոզ անապատը», «Գետի վրայում»):

Բիքնալդ Շոու: Բանվորական շարժման վերելքը, լիբերալիզմի ճգնաժամն Անգլիայում 80—90 թ.թ. և վաղ Շոուի աղբիկալիզմը: Բուրժուական բարոյականություն և շոդքորթություն քննադատությունը: Իրանց սոցիալական պայմանավորվածության գրեթեվորումը «անախորժ» պիեսներում («Սուլ անկյուններ», «Պարոնուկի Ուորենի մասնագիտությունը»): Շոուն և Ֆարիանական սոցիալիզմը: Շոուի գերմարդը և մարդու կենսաբանական վերափոխման միջոցով աշխարհը փոփոխելու գաղափարը («Մարդը և գերմարդը»):

Շոուի սատիրայի սրությունը: Բուրժուական տրադիցիոն պատկերացումների կործանելը: Շոուի պարագործների դերը նրա դրամատիկական տեսությունը: Վողբերական հերոսի ցածացումը («Շոկոլատե դինվորիկ», «Կեսարը և Կեղպատրան»): Շոուն և իմպերիալիստական պատերազմը: Բուրժուական քաղաքակրթության կործանման կանխատեսումը «Փշրված սրտերի տան» մեջ: Բուրժուական քաղաքականության և կուլտուրայի ճգնաժամից յելք վորոնելու ճգնումը Շոուի մոտ: Նրա յելույթներն ու հողվածները ի պաշտպանություն ԽՄԷՄ:

Հերբերտ Ուելս: Ուելսի վաղ շրջանի ֆանտաստիկան և 1880 թվականների ճգնաժամն Անգլիայում: Կապիտալիստական քաոսի ֆանտաստիկական պատկերները: Համաշխարհային կառուստարոֆանների նախատեսումը («Ժամանակի մեքենան», «Աշխարհների պայքարը»): Ուելսի գիտական-ֆանտաստիկական ժանրը՝ սարսափը և խոնարհվելը բուրժուական տեխնիկայի և գիտության գործության առաջ: Ուելսի եվոլյուցիոն գաղափարները: Մանր բուրժուական ուսուցիչները «գիտակցություն հեղափոխություն» և գիտական-տեխնիկական ինտելիգենցիայի գործությանը հասարակությունը ուսցիոնալիզացիայի յենթարկելու:

Ուելսի կենցաղային վեպը մանր յարդանց մասին («Միստեր Պոլլի»):

Ուելսի վերջին տարիների պեսիմիզմը («Կրոկետի խաղա-  
մուրը»): Այցելութունը ԽՍՀՄ և սոցիալիստական հեղափոխու-  
թյան բուրժուական չլմբոնները:

### Գ) Քննադատական ուելսիզմը գեղանկարական գրականու- թյան մեջ

Թումաս Ման: «Բոնդերնարոզներ» վեպը: Այդ վեպի ուելսիզմը  
գերմանական բուրժուազիայի դեզրադացիայի նկարագրության  
մեջ: Թ. Մանի գեղարվեստական պրիյոմները (կոմպոզիցիան,  
բնութագրումները, նկարագրությունների կրկնությունները, լե-  
զուն): Արվեստի և արվեստագետի թեման («Տրիստան», «Թոնիս  
Կրեպեր», «Մահը Վենիցիայում»): Մոտեցումն ազգայնական գա-  
ղափարներին պատերազմի տարիներին: Թ. Մանի խոր հիաս-  
թափությունը պատերազմից հետո: Դիմումը դեպի մահվան և  
քայքայման թեմաները, դեպի նրբացած պսիխոլոգիզմը («Կախար-  
դական լուր»): Աստրանդիություն Գերմանիայից Ֆաշիստական  
հեղաշրջումից հետո: Դրական իդեալների վորոնումներն ավե-  
տարանական բաղձահատոր եպոպեյայում («Հովսեփը և նրա յեղ-  
բայրները»): Թ. Մանի հուժանիզմը և նրա բողոքն ընդդեմ ֆա-  
շիստական բարբարոսության:

Հենրիխ Ման: Մատիթու վեպ ֆինանսական բուրժուազի-  
այի մասին («Կիսկային ափեր»): Դեկադանսի ազդեցությունը  
Հ. Մանի ստեղծագործության վրա («Աստվածուհիները»): Բուր-  
ժուական հասարակության «բարոյական հիմքերի» դրսևվորումը,  
մարդու և գեղարվեստի քայքայման ցուցադրումը: Մանը բըն-  
նապետի պատկերը («Ուսուցիչ Ունրատը»): Գերմանական կայս-  
րություն և նրա կրողների հիանալի նկարագրությունը («Աղնիվ  
հպատակ» վեպում): Հետիմիզի պատկերը — բուրժուական ուելսի-  
այի հավաքական տիպը: Հենրիխ Մանի ստեղծագործության  
քննադատական ուելսիզմը և նրա գեղարվեստական յեղանակ-  
ները (գույների խտացում, շարժ, գրոտեսկ):

Հ. Մանի պացիֆիզմը և հուժանիզմի գաղափարները պա-

տերազմի ժամանակ: Հ. մանի շիրքը պատերազմի ժամանակ  
Հ. Մանի շիրքը Վայմարյան հանրապետության տարիներին:  
Հենրիխ Մանի ղերքը հակաֆաշիստական շրահանության մեջ  
Փաշիզմի դեմ ուղղված նրա գրքերը («Ատելություն» և «Կգա  
որը»): Հ. Մանի հակաֆաշիստական հասարակական ազդիվ  
գործունեությունը: «Հենրիխ 4-րդի» յերիտասարդությունը  
վերջին վեպը, վորպես փորձ ներկայացնելու հուժանիզմի հա-  
մար պայքարողի դրական պատկերը: Պատմական մեծ վեպի լայն  
կտավը:

### Դ) 20-րդ դարասկզբի ամերիկական գրականությունը

Զուլայի նատուրալիզմի ազդեցությունն ամերիկական գրա-  
կանության մեջ: Սոցիալական և կենսաբանական պայմա-  
նավորություն գաղափարները, պայքար ընդդեմ պաշտոնական  
լավատեսության, «ազստ ստեղծագործող ամերիկացու» տրա-  
դիցիոն պատկերի կործանումը: Նատուրալիստ Մորիսը և նրա  
ֆերմերական շարժման թեմատիկան: Ս. Հենրիխ նովելները:

Թեոդոր Դրայզեր: Կենսաբանական որենքների կերպարումը սոց-  
իալական կյանքում: Այստեղից վաղ Դրայզերի ֆատալիզմը և եմ-  
պիրիզմը: Մանրակրկիտացումը և վավերագրություն: «Ամու-  
րալիզմը» և պայքար պուրիտանական բարոյականության դեմ  
(«Կերբիլի քույրը»): Զգտումը եպիքական ձևին, — «Ճանկություն»  
տրիլոգիան, — ամերիկական բուրժուական դեմոկրատիան մեր-  
կացնող խոշոր գործ: Ֆինանսական «գերմարդու» պատկերը:  
Դրա շատագուվումը և քննադատությունը («Ֆինանսիստ»,  
«Տրիստան»): Արվեստագետի պրոբլեման կապիտալիզմի պայման-  
ներում («Հանճար»): Ռեալիզմը և նատուրալիզմը Դրայզերի,  
ստեղծագործության մեջ: Դրայզերը պատերազմից հետո:

Կապիտալիստական Ամերիկայում «հավատար հնարավորու-  
թյուններ բոլորի համար» լոզունգի մերկացումը («Ամերիկյան  
վողբերգությունը»): Կապը հեղափոխական գրական շարժման հետ  
(«Ամերիկյան վողբերգությունը»):

Ձեկ Լոնգոն: Նրա պայքարը հանուն ազատ, ուժեղ անհատի  
հակադրված քաղքենիության և բուրժուական սահմանափակու-  
թյան: Վաղ Լոնգոնի անարխիստական ինդիվիդուալիզմը: Ռասմի-  
րայություն և «ստեղծագործություն» ուժանտիկան վորպես անհատի

անկախութեան վերածննդի փորձ: Բնութեան ուժանտիկան («Ապրիտակ ժամիք» և այլն): Վոսկի վորոնողների ուժանտիկան և Լոնդոնի արկածախնդրական ժանրը: Լոնդոնի «Բերմարդը» («Ծովային դայը»):

Լոնդոնը և սոցալիստական կուսակցութիւնը: Վեպ հեղափոխութեան մասին («Յերկաթի կրունկը»): Մասսայի դերի ճհասկանալը, հոռետեսութիւնը բանվորական շարժման հեռանկարների զննատեսութեան մեջ: Բաջութեան, խիզախութեան, կյանքի տենչի ուժանտիկան—արժեքավորը Լոնդոնի ստեղծագործութեան մեջ («Կյանքի սերը», «Լուսնի հովիտը»): Արվեստագետի վողբերգութիւնը բուրժուական հասարակութեան մեջ («Մարտին Ի զեն»): Արվեստի անկուսը, Լոնդոնը կյանքի վերջում («Կարմիր արեիկ», «Մեծ տան փոքր տիրուհին»): Լինինը Ձեկ Լոնդոնի մասին:

Սպտոն Սրնկեր: Լենինը Սինկլերի մասին: Սինկլերը—«զգացմունքների սոցիալիստ»: Սինկլերը և մերկացնող վեպը: «Կեղտը դուրս հանող» գրականութիւնը («Ձունգլիներ»): Կապիտալիստական շահագործման սարսափների նկարագրութիւնը: Վերաբերմունքը դեպի սոցիալիզմը, վերպես սիրո նոր կրոնի և յեղբայրութեան: Սինկլերի «սոցիալիզմի» խաղաղ քարոզչական ընդոյթը: Ապաշխարող ինտելիգենտի պատկերը, քարոզչութիւնը, սենտիմենտալ ճարտասանութիւնը: Սինկլերի մերկացնող ուսուցիչը «Արքածուխ» վեպում: Սինկլերի դերքն իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Սինկլերը ինտերնացիոնալիստ («Ջիմմի Խիզկնա»): Սինկլերի վերաբերմունքը դեպի ԽՍՀՄ: Հրապարակախոսական ջննդատեսութիւնն ուղղված կապիտալիզմին, հետպատերազմյան առաջին տարիներին: Սինկլերի հակաֆաշիստական յելույթները և Իսպանիայի պայքարի մասին նրա վեպը («Ներանք չեն անցնի», «Փաշիզմի Կեմ»):

### Յ-ՐԴ ԲԱԺԻՆ—ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերկու աշխարհների, յերկու սիստեմների պայքարը: Կապիտալիզմի ճնշածամը: ԽՍՀՄ-ի ազդեցութիւնն արևմտյան ինտելիգենցիայի և ամբողջ աշխարհի հեղափոխական գրողների վրա: Հեղափոխական գրականութեան նոր վերելքը: Փաշիզմի

բարբարոսութիւնը, ազրեսիվութիւնը, հակամարդկայնութիւնը և առաջավոր գրողների բողոքը նրա դեմ: Կուստուրայի մի շարք վարպետների ներատուժը հակաֆաշիստական շարժման մեջ: Հակաֆաշիստական ժողովրդական լայն ճակատը գրականութեան մեջ: Մաքսիմ Գորկու և խորհրդային գրականութեան հակայական դերը Արևմուտքի հեղափոխական գրականութեան պարզացման մեջ:

### 1. ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### Ա.) Համաբխարհային պատերազմը յեվ «Կարտե» խմբակը

Արևմտա-յեվրոպական ինտելիգենցիայի շերտավորումը պատերազմի ազդեցութեան տակ: Շարժումը պատերազմի դեմ և «Կարտե» խմբակի կազմակերպումը: Ռոլանի և Բարբյուսի առաջատար դերը: Կարտիստների ինտերնացիոնալիզմը, պատերազմի դեմ հանդես գալը: «Կարտե» և Յերբորդ Ինտերնացիոնալը: Լենինի վտղջույնը «Կարտե» խմբակին: Վոգու հեղափոխութեան իրեալիստական կոնցեպցիան և ինտելիգենցիայի դերի գերազնահատումը: «Կարտեյի» պացիֆիստական մասի աջացումը և խմբակի պառակտումը: «Կարտեյի» ձախ թիւը,—Բարբյուս, Լեֆկեր, Վայան-Կուստուրայի և հեղափոխական գրականութեան սկիզբը Փրանսիայում:

Համաշխարհային պատերազմը պացիֆիստ գրողների նկարագրութեան մեջ, վորոնք պատերազմի թեմային մոտենում են, վորպես մարդկային տառադանքների թեմայի (Լուվեյի «Դոսպիտուլը» և այլն):

Հանրի Բարբյուս—նրա ստեղծագործական ուղին վաղ ջրջանի պոեզիայից («Լացողներ») դեպի «Կրակի» ուսուցիչը: Լենինը Բարբյուսի «Կրակ» և «Լույս» վեպերի մասին: Պատերազմի սարսափների և շովինիզմի մերկացումը: Մասսաների հեղափոխական գիտակցութեան աճումը: Ստալինի մասին գիրքը: Բարբյուսի հակապատերազմական և հակաֆաշիստական գործունեութիւնը: Բարբյուսի վորպես մարտիկի, տրիբունի և արվեստագետի նշանակութիւնը: Ստալինը Բարբյուսի մասին:

Բ) Հեռագրաբազմյան նգնաժամը յեվ բուրժուական գրականությունը Քրանսիայում

Մարսել Պրուստ—բուրժուական պարագիտիզմի արվեստը («Կորսրված ժամանակի վորոնումներում»): Ֆրանսիական բուրժուազիայի վերին շերտի քայքայման պատկերը: «Գիտակցության հոսանքը» և բարձր դասակարգի հանդամանքների մանրամասնությունների վերարտադրությունը: Բյուրգուոնի փիլիսոփայությունը և Պրուստի ստեղծագործական մեթոդը՝ պայքար բանականության դեմ, ինտուիտիվիզմ, գեղարվեստի պրիմատը գործունեյության նկատմամբ: Պրուստի կաստայականությունը: Ապոլոգետիկայի և հոռետեսական անել վիճակի դուզակցումը Պրուստի գրվածքներում: Պրուստի լիզուն և շարահյուսությունը: Պատմելը—վորպես ակափա առցիսցիանների շղթա:

Սյուռետալիզմը և դադաիզմը վորպես բուրժուական գրական անկման ամբողջացած արտահայտություն: Դրանց պոեզիայի վոտանավորի քայքայումը, երոտիկան, ֆորմալիստական տրյուկները, անառարկայական—նեգատիվ բովանդակությունը: Պոլ Մորանը և բուրժուական հափշտակության ջատագովումը («Լեվիս և Իրեն»): Մորանի գաղութային թեմաները («Սև կախարչություն» և այլն): Ֆաշիստական դադափարախոսության արտացոլումը Մորանի ստեղծագործության մեջ:

Ժյուլ Ռոմեն: Ռոմենի վաղ շրջանի ստեղծագործությունը: Նրա մասնակցությունն «աբբայություն» խմբակում: Ժյուլ Ռոմենի քաղաքական տատանումները: Ռոմենի հետպատերազմյան ստեղծագործությունը: Մոնումենտալ արվեստ ստեղծելու փորձերը—«Բարի կամքի մարդիկ»:

Գ) Քրանսիական հակաճաբասական յեվ հեղափոխական գրականությունը

Ֆրանսիական ինտելիգենցիայի լայն հակաֆաշիստական շարժումը: Կուլտուրայի պաշտպանության կոնգրեսը Փարիզում (1935 թ.): «Մոնը», «Կոմյուն», «Երոպ» հանդեսները: Ռոլանի, Մալրոյի, Արագոնի և այլոց մասնակցությունը հակաֆաշիստական պայքարում:

Արագոն—նրա ուղին սյուրռետալիզմից դեպի ռետալիզմը («Կարմիր ճակատ», «Ուրալ», «Բաղելի գանգերը» և «Հարուստ թաղամասերը»): Բուրժուական հասարակության ռետալիստական ցուցադրումը: Արագոնի վոճը: Դիմելը խոսակցական լեզվին: Արագոնը և հեղափոխական ռետալիզմի համար տարվող պայքարը Ֆրանսիայում:

Մալրո—ուղին հոռետեսությունից և դեկադանտությունից դեպի հեղափոխական հերոսականության պատկերները («Մարդկային գոյության պայմանները» և «Ատիլության տարիները»):

2. ԻՍՊԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՑԱՇԻՄՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռաֆայել Ալբերտի պոեզիան: Ռոմոն Սենդերի ստեղծագործությունը («Մագնիս», «Յոթ կարմիր կիրակիներ», «Հասարակական կարգ» և այլ վեպերը Իսպանիայի հեղափոխական շարժման մասին): Անարխո-սինդիկալիզմի պրոբլեմները, ինտելիգենցիայի դերը հեղափոխության մեջ: Հեղափոխական Աստուրիան Իսպանական զրականության մեջ: Իսպանական դյուղացիության արտացոլումը գրականության մեջ (Արդերիսու Քյուդալիսները, Արկոնադաի «Աղքատները հարուստների դեմ»): Բենավիդեռոյի ռեպրտաժը («Միջերկրական ծովի վերջին ավազակը»): Ժողովրդական Իսպանիայի բանաստեղծները՝ Պլյա և Բելտրան, Լորկա և այլք: Դիմումը ժողովրդական ձևին—«Ռոմանսերը»: Հերոսության նոր ըմբռնումը իսպանական պոեզիայում (կազմակերպվածության, կարգապահության փառաբանումը): Հանրապետական Իսպանիայի գրողների մասնակցությունը իսպանական ժողովրդի պայքարում՝ ընդդեմ ֆաշիզմի: Կուլտուրայի պաշտպանության յերկրորդ միջազգային կոնգրեսը Ֆաշիզմի դեմ (1937 թ.):

3. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա) Համախարհային պատերազմը յեվ եֆապրեսիոնիզմը  
Եքսպրեսիոնիզմը—բուրժուական գեղարվեստի գաղափարախոսական-ստեղծագործական անանկության ցայտուն արտահայտություն պատերազմի և հետպատերազմյան ճգնաժամի ժամա-

նակ: Հակառեալիտական տենդենցները, իզեալիտական հոռե-տեսական փրիստփայլությունը, խորհրդապաշտությունը, փա-խուստ իրականությունից դեպի հողեոր աշխարհը:

Բանաստեղծական ձևի կործանումը, հին եսթետիկայի փշրումը: Գրական վոճի բոլոր բաղադրիչ մասերի անկումը, պատկերի անկումը: Անցյալի կուլտուրայի, գրական ժառանգության ժխտումը: Արտահայտության նրբությունը, լարվածություն: Շարահյուսության կամայական խորտակումը:

Գերմանական եքսպրեսիոնիզմի ձախ խմբավորումների ա-նարխիստական-խռովարարական ընույթը: Ակտիվության, դի-նամիկության պրոբլեմը: Վերացական բողոք համաշխարհա-յին պատերազմի դեմ: Փրանկի նովելան՝ «Մարդը բարի չե»: Հազենկլեյվերի լիրիկան—«Մարդասպանը նստած է ոպերայում»: Փրանց Բերգեր: Մարդկային գիտակցության միստիկական յեր-կավածությունը («Մարդ հայկուց»): Աշխարհի ուղղման գա-ղափարը բարոյական վերածնության ճանապարհով: Գեորգ Կայզեր: Նրա բողոքն ընդդեմ կապիտալիստական աշխարհի ան-հոգության, ինդուստրիալիզմի («Դազ»): Սխեմատիզմը նրա ստեղծագործության մեջ: Պերսոնաժների դիմազուրկ լինելը:

## Բ) Գերմանական բուրժուական հակապաստրազմական վեպը

Վիլհելմյան Գերմանիայի պարտությունը: Հուսախարու-թյունը, պատերազմական ֆրազի մերկացումը: Երիկ-Մարիա-Ռեմարկ. նրա հակապատերազմական վեպը՝ «Արևմտյան ճա-կատն անփոփոխ է»: Պատերազմի սարսափների նկարագրու-թյունը: Հայրենասեր յերիտասարդության բարոյական կործան-ման հուսախարությունը: Վեպի շարունակությունը («Վերա-դարձ»): Տուն վերադարձած պատերազմի հերոսները տեղ չեն գտնում հետպատերազմյան Գերմանիայում: Վեպի հուսաբե-կությունը, անեյանելիությունը:

Արևալդ Յվեյգը և նրա «Մերժանտ Գրիշա» պացիֆիստական հոգեբանական վեպը: Իմպերիալիստական պատերազմիը հրանման խորացումը «Դաստիարակությունը Վերդենի սակ» վեպում: Նրա վեպերի հումանիստական տենդենցները: Ա. Յվեյգի անցումը դեպի հակաֆաշիստական հեղափոխական գրականությունը վերջին տարիներում:

Ստեֆան Յվեյգը և հոպերանական վեպը: Ֆրեյդիզմի ազ-դեցությունը նրա ստեղծագործության վրա: Յվեյգը և կուլտու-րական ժառանգությունը: Պատմական պերսոնաժները: հոգեբանա-կան նուրբ նկարագրիները նրա մոնոդրամֆիաներում և ռապա-կուսակցականության» կեղծ գաղափարը («Երազմ»): Ստեֆան Յվեյգի քաղաքական տատանումները վերջին տարիներում:

## Գ) Հակաճաշիստական յեվ հեղափոխական գրականություն

Կուլտուրական արժեքների խորտակումը ֆաշիզմի կողմից: Հակակուլտուրականության պրոպագանդը: Պատերազմի, դաժա-նության, հակահումանիզմի շատագույնումը:

Փաշիստական գրականության հակառեալիտականությունը կամ կեղծ ռեալիզմը, կեղծ տենդենցիոզականությունը: Գրականու-թյան կործանումը ֆաշիստական Գերմանիայում: Հաուստմանի անկումը:

Դեմոկրատական ինտելիգենցիան կուլտուրան պաշտպա-նում է ֆաշիզմից: Կուլտուրայի վարպետների ներգրավումը հա-կաֆաշիստական շարժման մեջ: Կուլտուրայի պաշտպանու-թյան Փարիզյան կոնգրեսի (1935) դերը: Հակաֆաշիստական միասնական ճակատը գրականության մեջ: Գերմանական գրա-կանությունը վտարանդիություն մեջ: Գննադատական ռեալիստ հեղինակների անցումը դեպի գրական, հերոսական, սոցիալիս-տական նոր ռեալիզմը: ԽՍՀՄ-ի ազդեցությունը արևմուտքի գրականության վրա: Թոմաս Մանը և Հենրիխ Մանը հակա-ֆաշիստական պայքարում:

Լեոն Ֆեյխտվանգեր—նրա պատմական վեպի տեսությունը: Բարբարոսություն դեմ տարվող հումանիզմի պայքարի ժամանա-կակից գաղափարների արտացոլումը պատմական վեպում («Տգեղ հերցոգուհին», «Հրյա Ջյուսը», «Ռոսիֆ Ֆլավիի մասին Տրիլոգիան», «Կեղծ Ներոնը»): Ազգության պրոբլեմը Ֆեյխտվանգերի վեպերում: «Հաջողություն» վեպը—հետպատերազմյան Գերմանիայի քաղա-քական կյանքը ցայտուն սեալիստորին արտացոլող: Բուրժուական հասարակության մեջ արդարադատության և յստեղծագործական ազատության թեման: Փայլուն սատիրան ֆաշիզմի նկատմամբ: Թեակցիոնիզմի, ֆաշիստների և քաղքենիների ախիկական

պատկերները: Ընդդեմ Ֆաշիզմի՝ հանուն հումանիզմի, ար-  
դարադատութեան և մարդկային արժանապատիւթեան մար-  
տնչողները զրական պատկերները: «Ուղին հայրի ընտանիքը»  
վեպի տեղը հակաֆաշիստական զրականութեան մեջ: Հեա-  
ֆաշիստական արբատութեան գերմանական կյանքի ու-  
ալիստական ցուցադրումը: Բուրժուական հումանիստական  
գաղափարները ճշմարտութեամբ:

Բուրժուական հումանիստ Գուստավ Ուլենհայեմի պատ-  
կերը՝ Ֆաշիզմի զրոհից հեղափոխական մարտիկների մո-  
տեցող:

Նացիոնալիզմի և ինտերնացիոնալիզմի հարցերը Ֆեյխտ-  
վանգերի մոտ: Հերոսութեան պրոբլեմը: Ֆեյխտվանգերը ԽՍՀՄ-ում:  
Նրա «1937 թ. Մոսկվան» գիրքը:

Իոհաննես Բ. Բեյլեր: Նրա ճանապարհը և քաղաքաբնու-  
նիստական բունարականութունից զեպի հեղափոխական  
ստեղծագործութունը («Քաղցած քաղաքը», «Գորշ կալոննաներ»):  
Հեղափոխական պոեզիայի խոշոր ձևի վորոնումները: Բեյլերի  
հակաֆաշիստական քաղաքական բանաստեղծութունները: Սո-  
նետները: Վերջին բանաստեղծութունների հասունութունն ու  
զեղարվեստականութունը:

Երիկ Վեյնբերտը—մասսայական ազիտացիոն պոեզիայի  
վարպետ: Վեյնբերտի բանավոր պոեզիան, զրա անմիջական  
ազդեցութունը մասսաների վրա («Երիկ Վեյնբերտը խո-  
սում է»): Նրա բանաստեղծութունների հեղափոխական ու-  
մանտիկան: Մատերական բանաստեղծութունները: Հակա-  
ֆաշիստական բալլադներն ու յերգերը: Բերտ Բրեյտի լիբրեկան:

Հակապատերազմական հեղափոխական գրականութունը:  
Լյուդվիգ Ռենի հակապատերազմական «Պատերազմ» վեպը, շա-  
րունակութունը՝ «Պատերազմից հետո»:

Բանվորական շարժումը Բրեյդիի «Մեքենաչինարարական  
գործարան» վեպում: Բրեյդիի ուղին սխեմատիզմից զեպի գե-  
ղարվեստականութեան խորացումը, լեզվի աշխուժացումը: «Փոր-  
ձութունը», «Քո անհայտ յեղայրը»՝ փաստաթղթեր Ֆաշիստա-  
զան զնդանների և գերմանական կոմկուսակցութեան ընդհա-  
տակա պայքարի մասին:

Աննա Զեգերսի վեպերը: Այդ վեպերի մշակված վոճը («Զինորս»

ների ապստամբութունը», «Ճանապարհը փետրվարի վրայ»):  
Եզոն Երվին Կիշի հեղափոխական սեպորտաժը: Աշխարհի  
զանազան յերկրների ցայտուն պատկերները, բազմապատկե-  
րայնութունը, տեմպերամենտայնութունը:

Հեղափոխական դրամատուրգիան: Ֆրիդրիխ Վոլֆի դրամա-  
ները:

#### 4. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

#### ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զոյսը և «Գիտակցութեան հոսանքի» դպրոցը: Զոյսի  
ստեղծագործութունը, վորպես բուրժուական արվեստի ծայր  
աստիճան անկման արտահայտութուն: Սորացումը յենթագի-  
տակցական աշխարհում, վերադարձ զեպի իրրացիոնալ մտածո-  
ղութունը: Ֆրեյդի ազդեցութունը Զոյսի վրա: Նկարագրու-  
թունների ցինիզմը («Ուլիս»): Հոգեոր ստեղծագործական  
սկզբունքի («Բանաստեղծ Իդեալ») և բուրժուա-քաղքենիական  
գարշտութեան ու կեղտի (Բլյում) հակադրումը: «Ուլիսի» սատի-  
րական կողմերը: Զոյսի հոսանքական վերաբերմունքը դ՝ ի  
բուրժուական աշխարհը: Զոյսի ֆորմալիզմը: Զոյսի ազդեց-  
թունը յեվրոպական և ամերիկական գրականութեան վրա:

Այսպես կոչված «կորսված ժամանակների» գրողները անգլի-  
կան գրականութեան մեջ: Բուրժուական Անգլիայի և պատերազմ  
մերկացումը Ուլիսգտոնի վեպերում («Հերոսի մահը»): Ուլի-  
սիզմի պրոբլեմը («Իսկական գրախոր»):

Անգլիայի հակաֆաշիստական գրականութունը: Անգլիական  
գրողները և հանրապետական Իսպանիայի պայքարը Ֆաշիզմի  
դեմ:

#### 5. ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«20 թվականների սերնդի» գրողները:

Շերվուդ Անդերսոն: «Մութ ծիծաղը»— յենթագիտակցականի,  
միստիքական և սեկսուալիստական սկզբունքների մտախմբերը:  
Նույն տեղեկանքները նովելներում: Քաղքենիական վոզոր-  
մելիութեան վարպետորեն նկարագրութունը: Անդերսոնի զիրքը  
ճշմարտմի աարիներին:

«Անդի ցանկութեան» — բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի արտացոլումը: Հիմնիդուել: «Կորսված սերնդի» նկարագրութեանը («Արևը նույնպես բարձրանում է», «Մնաս բարե դենք»): Ավերվածութեան, մահվան մոտիվները: Հիվանդագին պսիխիկայի և արիտմիայի թեմատիկայի հակադրութեանը («Մահը կեստրից հետո»): Հիմնիդուելի վերջին յիշյալներն ի պաշտպանութեան հանրապետական Իսպանիայի: Նրա աշխարհայացքի առաջադիմութեան արտացոլումը «Ունենալ և չունենալ» վեպում: «Նոր մասաններ» հանդեսի ոչերկազիրները և բանթղթակիցները: Մայիլ-Հոլը, Նրա դերը, վորպես հեղափոխական գրական շարժման կազմակերպիչի և ղեկավարի: Ամերիկական աղքատութեան սեփականական նկարագրութեանը «Հրեաներ առանց փողի» վեպում:

ԱՄՆ-ի նեգրական գրականութեանը: Կենդանու չյուզ («Գարլեմ»): Աստիճանական անցումը դեպի սեփականական սեփականական պոեզիայի «Իջից» վեպը: Հրաժարումը նեգրական արադիցիոն պոեզիայի կրոնական և մեթոդադճոտ մոտիվներից: Վերջին շարժանի հեղափոխական բանաստեղծութեանները:

**ՀԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՈՒՏ-ԳՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հեղափոխական գրականութեան գործնական խնդիրները ֆաշիզմի դեմ տարվող պայքարում: Հին ըննադատական սեփականական վերջը և նոր, դրական և հերոսական սեփականական սկիզբը: Խարակտերի անկումը բուրժուական գրականութեան մեջ և հերոսական մեծ խարակտերի ստեղծումը հեղափոխական գրականութեան մեջ: Հեղափոխականի պատկերը: Հակառակ 20-րդ դարասկզբի սեփականական գեղարվեստական ներթափանցումը դարաշրջանի հիմնական հակասութեանների ներսում: Խորհրդային գրականութեանը և համաշխարհային հեղափոխական գրականութեանը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ**

1. Золя—«Деньги», «Труд», «Ածխահաններ»:
2. Իբսեն—«Բրանդ», «Ժողովրդի թշնամին»:
3. Гамсун—«Պան», «Голод»:

4. Հաուպտման—«Զուլահներ»:
5. Метерлинк—«Слепые», «Непрошенная»:
6. Верхарн—«Стихи»:
7. Франс—«Таис», «Кренкебиль», «Остров пингвинов», «Боги жаждут», «Современная история»:
8. Роллан—«Бунт», «Ярмарка на площади», «Кола Брюньон» «Прощание с прошлым», «Очарованная душа»:
9. Мопассан—«Милый друг», «Մի կյանք» (3—4 նովելա ըստ ընտրութեան):
10. Բարբյուս—«Կրակը», «Ստալին»:
11. Пруст—«В поисках утраченного времени», (В сторону Свана т. I):
12. Арагон—«Базельские колокола»:
13. Генрих Манн—«Верноподданный», «Юность Генриха IV»:
14. Томас Манн—«Будденброки», «Тонно Крегер»:
15. Ремарк—«На западе без перемен»:
16. Фейхтвангер—«Успех», «Семья Опенгейма»:
17. Бехер—«Избранные стихи»:
18. Сендер—«Семь красных воскресений»:
19. Бредель—«Испытание»:
20. Уайлд—«Портрет Дориана Грея», сказки:
21. Киплинг—«Джунгли»:
22. Голсуорси—«Человек собственник»:
23. Шоу—«Профессия Г-жи Уоррен», «Трущобы», «Цезарь, и Клеопатра»:
24. Уеллс—«Машина времени»:
25. Драйзер—«Американская трагедия», «Финансист» «Титан»:
26. Лондон—«Յերկաթե կրունկը», «Мартин Иден», «Белый клык»:
27. Синклер—«Джунгли» կամ «Король Уголь», «Джимми Хиггенс», «Они не пройдут»:


**ՔՆՆԱԿԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՅՈՒՆ ԱՐԵՎՄԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՅՈՒՆ ԱՄՔՈՂ ԴՊԱՐՆՔԱԳԻ ՄԱՍԻՆ**

**Պ Ա Ր Տ Ա Դ Ի Ր**

1. «Մարքսը և Ենգելը արվեստի մասին»:
2. Шиллер—«История Зап.-Евр. лит-ры нов. вр.», I—II Հատորները (I հատորի հայերեն թարգմանութեանը կա):

Հ Ո Չ Պ Ա Ր Տ Ա Ղ Ի Ր

1. Фриче—«Очерки развития Западных литератур», М. 1931.
2. Коган—«Очерки по истории Зап.-Евр. лит-ры», т. I—II, М. 1934.
3. Луначарский—«История Зап.-Евр. лит-ры в ее важнейших моментах»—ч. I, II, 2-ое издание. М. 1930 г.



11

28450

APR 1 1920

9 APR 1959

180

11

28450

4162 1 R. 20 4.